ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 21.11.2023թ. հ.040 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվել են «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման գործընթացների կանոնակարգման մասին» հ.3757-Ա և «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների կազմակերպումն ու անցկացումը կանոնակարգելու մասին» N 3758-Ա որոշումները:

Նշված որոշումներով հաստատվել են Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը մրցույթով օտարման, վարձակալության տրամադրման և օտարման աճուրդի, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների և աճուրդների կազմակերպման ընթացակարգերը, ինչպես նաև Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների /աճուրդների/ կազմակերպման և անցկացման ու Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով /մրցույթներով և աճուրդներով/ տրամադրման և օտարման նպատակով հողամասերի ընտրության և քաղաքաշինական ծրագրավորման հանձնաժողովների կազմերը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ անշարժ գույքերի օտարման վերաբերյալ ներկայումս Երևանի քաղաքապետի 26.12.2018թ. հ.հ.3757-Ա և 3758-Ա որոշումների հիման վրա ձևավորված հանձնաժողովների կողմից հաստատված աճուրդներ հայտարարված չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ